ՀՏԴ: 929:32(479.25)Սարգսյան+ 929:32(479.25)Տամատյան

DOI: 10.54503/0135-0536-2025.3-230

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. Միհրան Տամատյան, *Երևան, «Անտարես» հրատ., 2025, 416 էջ*:*

**Բանալի բառեր՝ Միհրան Տամատյան, ազգային-ազատագրական պայքար, քաղաքական գործիչ, Հայկական հարց, անկախություն, Կիլիկիա, Վերակազմյալ Հնչակյան, ռամկավար, հիմնադիր, հայոց պայքարի նահապետ:**

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր դարի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Սարգսյանի գիտական ուսումնասիրությունների շրջանակը բավական լայն է: Նա գնահատելի աշխատանք է կատարում՝ ուսումնասիրելով հայ ազգային կուսակցությունների և պարբերական մամուլի պատմությունը, XIX դ. վերջի արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության հեղինակների ու շարժման երևելի գործիչների կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը: Նրա «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.)», «Հայ ազգային ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914 թթ.)», «Արևելահայ ռամկավար մամուլը (1918–1920 թթ.)», ««Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում»», ««Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը և «Արմենիա» պարբերականը»» աշխատությունները նոր խոսք են հայ պատմագիտությունում: Այս շարքը վերջերս համալրել է նրա հեղինակած «Միհրան Տամատյան» ուշագրավ մենագրությունը: Խմբագիրը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ալբերտ Խառատյանն է, տպագրվել է Երևանի «Գլաձոր» համալսարանի և Սեծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի գիտական խորհուրդների երաշխավորությամբ:*




*Արևմտահայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, հրապարակախոս, գրող, թարգմանիչ, մանկավարժ Միհրան Տամատյանի կյանքն ու գործունեությունը մեզանում հանգամանորեն ուսումնասիրված չէ: Թերևս բացառություն է կազմում սփյուռքահայ Պ. Տեփոյանի՝ «Միհրան Տամատյան (1863–1945)» աշխատությունը (Բեյրութ, 1964 թ.), որը, սակայն, ամբողջությամբ չի լուսաբանում նրա գործունեության բոլոր ոլորտները:*

*Ս. Սարգսյանը մենագրությունում նշում է, որ Տամատյանը, լինելով արևմտահայ ազգային գարթոնքի ու ազատագրական պայքարի գաղափարախոս և*

* Ներկայացվել է 05. VIII. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

*գործնական պայքարի մշտական մասնակից, որն առանց չափազանցության կարևոր դերակատարում ունեցավ այդ պայքարում, մեզանում հանիրավի կիսամոռացված նվիրյալ է, ում մասին ավելի շատ խոսվել է, քան գրվել: Այդ բացը լրացնելու նպատակով նա տարիներ շարունակ իր գիտական ուսումնասիրության շրջանակում է պահել Միհրան Տամատյանի բազմաբնույթ գործունեության գիտական վերլուծությունը: Դրա վկայությունը Մ. Տամատյանին նվիրված նրա բազմաթիվ հոդվածներն են և «Միհրան Տամատյանի հրապարակախոսությունը» մենագրությունը, որտեղ հեղինակը քննախույզ մոտեցմամբ վերլուծում է նրա հրապարակումները: Դրանց վերլուծության հիման վրա Ս. Սարգսյանը հանգել է այն եզրակացության, որ Մ. Տամատյանը Հայկական հարցին, հայկական անկախ պետականություն ունենալու, հայ կամավորական շարժման, գաղթականության և կենսական այլ խնդիրներին նվիրված հրապարակումներում հանդես է եկել որպես հայության ապագայով մտահոգ գործիչ և հայորդի՝ վեր կանգնելով անձնական և կուսակցական շահերից ու մտայնությունից:*

*«Միհրան Տամատյան» մենագրությունը Ս. Սարգսյանի տարիների քրտնաջան աշխատանքի ու պրպտումների արդյունքն է, որտեղ համակողմանիորեն ներկայացնում է գործչի հասարակական-քաղաքական գործունեության կարևորագույն և արժանահիշատակ բոլոր դրվագները, որոնք անկողմնակալ ու անաչառ վերլուծում և գնահատում է:*

*Սույն աշխատանքը Ս. Սարգսյանն իրականացրել է արխիվային բազմաթիվ նյութերի, աղբյուրների, հուշագրությունների, հայ և օտարալեզու պատմագիտական ուսումնասիրությունների, XX դ. սկզբի տասնյակ հայ պարբերականների հրապարակումների հիման վրա, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Մենագրությունը բաղկացած է ներածությունից, ութ գլխից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:*

*Ներածությունում հեղինակն արձանագրում է, որ Մ. Տամատյանի ազգային, քաղաքական-հասարակական գործունեությունը գնահատելիս նրա թե՛ համախոհները և թե՛ ընդդիմադիրները երբեմն նրա հասցեին բացասական արտահայտություններ թույլ չեն տվել: Դա վկայում է այն մասին, որ Տամատյան գործիչը, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսն ու առաջամարտիկը երբեք չի դավաճանել իր հավատամքին, իր գործն ու գրիչը միշտ ծառայեցրել է հայ ժողովրդի շահերի պաշտպանությանը, մշտապես հավատացել է հայության լուսավոր ապագային, որին նվիրաբերել է գիտակցական ողջ կյանքը:*

*Մենագրությունում Ս. Սարգսյանը ներկայացնում է Մ. Տամատյանի ծագումը, կենսագրության արժանահիշատակ դրվագները, հասարակական, քաղաքական անցած ուղին, գրական ճանապարհը և հայրենասիրական գործունեությունը: Նրա բնութագրմամբ՝ Տամատյանը XIX դարավերջի և XX դարասկզբի այն երևելի դեմքերից էր, որոնք իրենց գիտելիքները, կարողությունները, կյանքն ու գործունեությունն անմնացորդ նվիրեցին արևմտահայության ազատագրման գործին: Մ. Տամատյանի նման գործիչները դարձան մտավորական հեղափոխականի և դիմադրական-կամավորական պայքարի արձանացած խորհրդանիշներ: Նա ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոս ու քարոզիչ էր, այդ պայքարի լուսավոր դեմքերից, աննկուն և անզիջում մարտիկ՝ գաղափարախոսական պայքարում, ինքնապաշտպանության կազմակերպիչ, խորաթափանց ու գործնական մտքի տեր կուսակցական գործիչ, ազգային մի*

*շարք ծրագրերի հեղինակ, Կիլիկիայի Հանրապետության հռչակման կազմակերպիչ և վարչապետ: Քաղաքական գործունեությունից զատ՝ Մ. Տամատյանն ազգապահպանության ջատագով էր, հայտնի հրապարակախոս, մի քանի պարբերականների հիմնադիր, գրող և մանկավարժ: Նա մարդկային բարձր արժանիքներով օժտված անձնավորություն էր, ուղղամտության, պարկեշտության և ճշմարտության ջատագով, արդարամիտ, իսկական հայրենասեր, ում սխրանքներով լեցուն կյանքն անմնացորդ նվիրված էր հայությանն ու հայրենիքին:*

*Մ. Տամատյանի քաղաքական և մարդկային դիմանկարը ներկայացնելիս Ս. Սարգսյանը նրա կյանքն ու գործունեությունը բաժանում է հետևյալ վեց փուլերի: Առաջին՝ 1880–1889 թթ., նախակուսակցական տարիներ, երբ նա հայրենասիրական գործունեություն է ծավալում Մուշում, Տարոնում, Սասունում և Կ. Պոլսում: Երկրորդ՝ 1889–1896 թթ., կուսակցական գործունեության տարիներ, երբ 1889–1896 թթ. անդամագրվում է Հնչակյան, իսկ 1896–1998 թթ.՝ Վերակազմյալ Հնչակյան կուսակցություններին: Երրորդ՝ 1896–1906 թթ., անկուսակցական տարիներ: Չորրորդ՝ 1906–1908 թթ., կրկին կուսակցական տարիներ, 1906–1908 թթ.՝ Վերակազմյալ Հնչակյան կուսակցության անդամ, 1908 թ.՝ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության անդամ: Հինգերորդ՝ 1918–1920 թթ., Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Կիլիկիայում: Վեցերորդ՝ 1920–1945 թթ., համախմբման և հայապահպանության, կուսակցական ու հասարակական-քաղաքական գործունեության տարիներ:*

*Փաստագրական հարուստ նյութերի հիման վրա Ս. Սարգսյանը ցույց է տալիս, որ նախակուսակցական տարիներին Մ. Տամատյանը մանկավարժական գործունեության ընթացքում գալիս է այն համոզման, որ արևմտահայության սոցիալական ծանր ու անտանելի վիճակը փոխելու համար հարկավոր է պայքարել: 1886 թ., որդեգրելով այդ ուղին, նա ակտիվ գործունեություն է ծավալել հեղափոխական գաղափարների խանձարուր համարվող երեք օջախներում՝ Վանի, Կարինի և Բաղեշի (Մուշ, Սասուն) վիլայեթներում:*

*1889 թ. անդամագրվելով Հնչակյան կուսակցությանը՝ Մ. Տամատյանը՝ որպես կուսակցության Վարիչ մարմնի անդամ, իր ընկերների հետ նախապատրաստում է 1890 թ. մայիսի 15-ին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում կայացած զանգվածային ցույցը: 1891–1893 թթ. նա հեղափոխական-քարոզչական գործունեություն է ծավալում Մուշում և Սասունում, որի համար ձերբակալվում է: 1894 թ. մայիսին ազատ արձակվելով՝ Մ. Տամատյանը Հնչակյան կուսակցության մի խումբ գործիչների հետ 1895 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում նախապատրաստում է Բաբ Ալիի ցույցը:*

*1896 թ. օգոստոս-սեպտեմբերին Լոնդոնում կայացած Հնչակյան կուսակցության ընդհանուր ժողովում գաղափարական տարաձայնությունների պատճառով պառակտում տեղի ունեցավ, որի հետևանքով հոկտեմբերի 16-ին Մ. Տամատյանը մի խումբ համախոհների հետ հիմնեց հինգ հոգուց բաղկացած Կենտրոնական վարչություն՝ սկիզբ դնելով Վերակազմյալ Հնչակյան կուսակցությանը: Նա այն համոզմանն էր, որ Հնչակյան կուսակցության ծրագրից անհրաժեշտ է հանել սոցիալիզմի մասին դրույթը. կուսակցության միակ նպատակը պետք է համարվի արևմտահայության քաղաքական անկախության համար պայքարը, իսկ թուրքական բռնատիրությունից ազատագրված Հայաս-*

*տանի կառավարման հարցի լուծումը թողնել ապագային: Ս. Սարգսյանը մենագրությունում արձանագրում է, որ Մ. Տամատյանի համոզմամբ՝ կուսակցության ծրագրից պետք է հանել այն ամենը, ինչը կարող է վնասել ազգի համախմբմանը:*

*Աշխատության հեղինակը հանգամանորեն ներկայացնում է ներկուսակցական հարցերում Մ. Տամատյանի և Ա. Արփիարյանի գաղափարական տարաձայնությունները, Հնչակյան կուսակցությունը Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության հետ միավորելու նրանց փորձերը, 1898 թ. հոկտեմբերին կուսակցությունից Տամատյանի հեռանալու պատճառները և ութ տարվա մեկուսացումից հետո կրկին կուսակցության շարքերը համալրելը:*

*Ս. Սարգսյանը կարևորում է Մ. Տամատյանի խաղացած դերը 1908 թ. հոկտեմբերին Ալեքսանդրիայում Հայ հեղափոխական միացյալ կազմակերպության հիմքի վրա Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն ստեղծելու և կուսակցության ծրագրային հիմնադրույթները կազմելու գործում: Նա ցույց է տալիս, որ Տամատյանի հեղինակած ծրագրում կուսակցության քաղաքական նպատակը համարվում էր օսմանյան սահմանադրությունը վերածել ռամկավարական սահմանադրության՝ պահպանելով Օսմանյան կայսրության ամբողջականությունը և այն վերափոխելով դարձնել սահմանադրական միապետություն ու լայն ինքնավարություն շնորհել տեղական և ազգային իշխանություններին: Ծրագրի ազգային նպատակն էր պահպանել հայոց ազգային իրավունքներն ու սովորույթները, արևմտահայոց սահմանադրությունը հարմարեցնել ժամանակի պահանջներին, ստեղծել ազգային և կրթական միացյալ վարչություն, զարգացնել հայոց լեզուն, պատմությունն ու մշակույթը: Նշվում էր, որ կուսակցությանը կարող է անդամակցել յուրաքանչյուր հայ՝ առանց դավանանքի և դասակարգի խտրության, որը նյութապես կնպաստեր ծրագրի կենսագործմանը:*

*Մ. Տամատյանի և նրա համախոհների համառ ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ ՀԱՌԿ կենտրոնը Ալեքսանդրիայից տեղափոխել Կ. Պոլիս, որտեղ հիմնվեցին մի քանի ակումբներ, իսկ կուսակցության անդամների թիվը հասավ հազարի:*

*Մենագրության մեջ Ս. Սարգսյանն իրավացիորեն կարևորում է Մ. Տամատյանի գործունեությունը Կիլիկիայում: Բալկանյան պատերազմի առաջին օրերին Եգիպտոսում նրա գործուն մասնակցությամբ մի խումբ ռամկավար, հնչակյան, դաշնակցական և վերակազմյալ հնչակյաններ ստեղծեցին «Ազգային պաշտպանության կոմիտե»: 1912 թ. հոկտեմբերին կոմիտեն տարածեց մի հայտարարություն, որը կազմել էր Մ. Տամատյանը: Հայտարարությունը Կիլիկիայի հայերի կացությունը համարում էր «ավելի քան երբևէ տագնապալի» նկատի ունենալով, որ 1909 թ. Ադանայի հայերի զանգվածային կոտորածից հետո նրանց անվտանգությունը երաշխավորված չէ:*

*Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մ. Տամատյանը գտնում էր, որ Անտանտի զորքերի ափհանումը Կիլիկիայում նոր հնարավորություններ կբացեր Հայկական հարցի լուծման համար: Նա Լևոն Մկրտչյանի հետ հիմնեց Եգիպտահայոց ազգային միություն, որը հայությանը կոչ արեց համախմբել ուժերը հակաթուրքական պայքարում: 1917 թ. մարտին Մ. Տամատյանը Բոստոնում մասնակցեց Ամերիկայի հայ ազգային միության ստեղծմանը, որը*

նպատակ էր հետապնդում ԱՄՆ-ում հայանպաստ քարոզչություն իրականացնել և ամերիկահայության նյութական աջակցությամբ նպաստել Հայաստանի ու Կիլիկիայի ազատագրմանը: 1918 թ. Մ. Տամատյանը, Հայ ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի խորհրդականի կարգավիճակով, Իտալիայում հայանպաստ գործունեություն ծավալեց, այնուհետև մասնակցեց Ազգային պատվիրակության՝ Փարիզում կայանալիք համագումարին, իսկ 1919 թ մայիսին որպես Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ մեկնեց Կիլիկիա:

Ս. Սարգսյանը 1919–1920 թթ. Կիլիկիայում ի շահ հայության Մ. Տամատյանի ծավալած բուռն գործունեությունը և, հատկապես, իր վարչապետությամբ 1920 թ. օգոստոսի 4-ին Կիլիկիան անկախ հանրապետություն հռչակելն իրավամբ համարում է նրա կենսագրության լուսապսակը: Պատմաբանը արխիվային նյութերի, աղբյուրների, մամուլի հրապարակումների, հայ և օտարալեզու գրականության վերլուծությամբ եզրակացնում է, որ տվյալ պահին Կիլիկիայում առկա իրարաբախ քաղաքական խառնարանի պայմաններում Տամատյանը հաջողություն չէր ունենալու: Ս. Սարգսյանի կարծիքով՝ նա թեև փորձառու, շրջահայաց և բազմաբեղուն գործիչ էր, հարգանք ու համակրանք էր վայելում տեղի քրիստոնյա և մահմեդական բնակչության, անգամ թուրքական որոշ շրջանակների կողմից, այնուամենայնիվ, չունենալով անհրաժեշտ ռազմական, նյութական և քաղաքական լիարժեք ռեսուրսներ՝ հազիվ թե հաջողեր իր առաքելությունում, քանի որ ստիպված էր գործել միայն սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով: Մյուս կողմից՝ Կիլիկիայում գործող հայ ազգային կուսակցությունները, Մ. Տամատյանի գլխավորած Ադանայի ազգային խորհուրդը չէին նկատում կամ անտեսում էին ֆրանս-քեմալական մերձեցումը, գերագնահատում էին դաշնակից տերությունների հնարավորությունները և թյուրիմացաբար գտնում, թե Ֆրանսիայի շահերը պահանջում են հանդես գալ հայության օգտին: Այդ քաղաքական կարճատեսությունը 1921 թ. հանգեցրեց Կիլիկիայի կորստին:

Մենագրության մեջ Ս. Սարգսյանն անդրադառնում է նաև Մ. Տամատյանի չափածո, լեզվագիտական ստեղծագործություններին ու հրապարակախոսությանը: Նա նշում է, որ Մ. Տամատյանը՝ որպես գրչի մարդ, լրագրող, խմբագիր, հրապարակախոս, բանաստեղծ, թատերական գործերի թարգմանիչ, իր ուրույն հետքն է թողել հայ գրական մշակույթի համայնապատկերում: «Փյունիկ», «Արև», «Լուսաբեր-Արև», «Զարթոնք» և այլ թերթերում Մ. Տամատյանի հրապարակումները թեև ոչ միշտ են առանձնանում վերլուծական, գրական-գեղարվեստական բարձր մակարդակով, սակայն իրենց ուղղվածությամբ և թեմատիկայով նպաստում են արևմտահայության ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

Հանրագումարի բերելով իր ուսումնասիրությունը՝ Ս. Սարգսյանը եզրակացնում է, որ Մ. Տամատյանն արևմտահայ ազգային-ազատագրական շարժման լուսավոր դեմքերից էր, ազգի նվիրյալ, մարդ, ով իր համեստ անձով մարմնավորում էր մի կողմից՝ պայքարի գաղափարախոսի, տեսաբանի, կուսակցական գործչի, մյուս կողմից՝ մարտնչող ազատատենչ, աննկուն մարտիկի: Ս. Սարգսյանի բնութագրմամբ՝ Տամատյանի կյանքն ու գործունեությունն արևմտահայության արդարացի պայքարին անմնացորդ նվիրվելու լավագույն օրինակ է: Նա ազգային, քաղաքական այնպիսի գործիչ է, որը երիտասարդ տարիքում

*անվարան անդամագրվեց Օսմանյան կայսրության դեմ հայ ժողովրդի բողոքի ցասմանն ու ընդվզմանը: Նա հայ ժողովրդի պայքարի այն սակավաթիվ ռահվիրաներից է, ով իր կոչմանն ու առաքելությանը հավատարիմ մնաց մինչև կյանքի վերջին օրերը՝ երբեք չկորցնելով հավատը հայության ապագայի նկատմամբ:*

*Ս. Սարգսյանը Մ. Տամատյանին համարում է քաղաքական պայքարի և կուսակցական գործունեության հմուտ գործիչ, Ռամկավար ազատական կուսակցության հիմնադիր-ղեկավար, ում իր համախոհներն ու գործընկերներն անվանում էին կուսակցության նահապետ: Նա ակնառու գաղափարախոս էր, համազգային, համահայկական երևելի դեմք, իսկական հայրենասեր, մեկն այն սակավաթիվ ազգային նվիրյալներից, ովքեր իրենց գործերով պատմություն են կերտում: Պատմաբանի դիտարկմամբ՝ Մ. Տամատյանը, հեղինակավոր քաղաքական դեմք և քաջակորով հայրենասեր լինելուց զատ, քննախույզ, խորաթափանց, գործնական մտքի տեր գործիչ էր, ուղղամտության, պարկեշտության և ճշմարտության ջատագով, խոսքի ու գործի մարդ: Կյանքի վերջին տարիները Բեյրութում անցկացրած Տամատյանն անձնվեր ու անբասիր հանրային գործչի, հայության ճակատագրով մտահոգ հայրենասերի համբավ ուներ, որին շատերն ընկալում էին գրեթե կատարելատիպ: Դրա վկայությունը նրան վերջին հրաժեշտ տալու ազգային հուղակավորությունն էր ու մարմինը Վահան Թեքեյանի կողքին ամփոփելը:*

*Ս. Սարգսյանի «Միհրան Տամատյան» մենագրությունը գիտական կարևոր ուսումնասիրություն է: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ այն ավելի կշահեր, եթե հեղինակը հիմնավորեր Մ. Տամատյանի ծննդյան տարեթվի վերաբերյալ իր մոտեցումը: Նա գրում է, որ այդ կապակցությամբ որոշակի տարակարծություն կա: Մ. Տամատյանի կենսագիր Պ. Տեփոյանը նրա ծննդյան տարեթիվը համարում է 1863 թ., որը մեզանում ընդունված է և տեղ է գտել հանրագիտարաններում: Մ. Տամատյանին նվիրված հրապարակումներում Վ. Ղազարյանը և Ա. Յափուճյանը նրա ծննդյան թիվը համարում են 1864 թվականը, որը Ս. Սարգսյանը չի հերքում՝ հենվելով իր «անձնական դիտարկումների, համեմատությունների և վերլուծությունների» վրա: Ցանկալի կլիներ, որ նա իր դիրքորոշումը հիմնավորեր համապատասխան փաստարկներով, որը կներկայացներ մենագրության առաջին գլխում՝ Տամատյանի ծագումը ներկայացնելիս, կամ մնացած գլուխներում՝ նրա հասարակական-քաղաքական գործունեությանն անդրադառնալիս: Սա ամենևին չի ստվերում Ս. Սարգսյանի կատարած աշխատանքը, որն իր արժանի տեղը կունենա XIX դ. վերջի և XX դ. սկզբների արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի, հայ քաղաքական ու հասարակական մտքի պատմության մեջ:*

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Պ. գ. դ., Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ XVIII–XIX դդ. ամերիկյան, եվրոպական հեղափոխություններ, ազգային-ազատագրական շարժումներ և դրանց վերաբերյալ հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի գնահատական, արևմտահայ հասարակական կազմակերպություններ, մասոնության պատմություն: Հեղինակ է 4 մենագրության և 80-ից ավելի հոդվածի: felmov@mail.ru